

Հավելված  
ՀՀ կառավարության 2020 թվականի  
դեկտեմբերի 10-ի N 2001 - Լ որոշման

ԱԴԻԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՍԱՆՁԱՋԵՐԾՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. Միջոցառման նպատակն է սոցիալական աջակցություն տրամադրել Ադրբեյջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողների ընտանիքների անդամներին (այսուհետ՝ շահառու):

2. Սոցիալական աջակցությունը տրամադրվում է ամենամսյա դրամական վճարի ձևով՝ յուրաքանչյուր անհայտ կորած զինծառայողի հաշվով ամսական 300 000 դրամի չափով, բայց ոչ ավելի, քան 6 ամսվա համար՝ սկսած սույն միջոցառումը հաստատելու ամսվանից:

3. Ամենամսյա դրամական վճարի տրամադրումն իրականացվում է Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) միջոցով:

4. Ամենամսյա դրամական վճարի տրամադրումը դադարեցվում է, եթե՝

1) անհայտ կորած զինծառայողը ճանաչվել է հիմնադրամի շահառու՝ շահառու ճանաչվելու ամսվա 1-ից.

2) հայտնի է դարձել զինծառայողի գտնվելու վայրը կամ դադարել են զինծառայողին անհայտ կորած համարելու հիմքերը՝ հայտնի դառնալու կամ դադարելու ամսվա 1-ից.

3) ամենամսյա դրամական վճարը վճարվել է 6 ամսվա համար՝ 6-րդ ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

4) ամենամսյա դրամական վճար տրամադրելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում նշված պայմանների առկայության վերաբերյալ տեղեկատվություն՝ տեղեկատվությունը ստացվելու ամսվա 1-ից:

5. Եթե ամենամսյա դրամական վճարի տրամադրումը դադարեցվում է սույն հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի հիման վրա, ապա վճարված գումարները նվազեցվում են շահառուին հիմնադրամից վճարման ենթակա միանվագ գումարից:

6. Եթե ամենամսյա դրամական վճարի տրամադրումը դադարեցվում է սույն հավելվածի 4-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի հիման վրա, ապա վճարված գումարները շահառուից հետ չեն պահանջվում և դիտարկվում են որպես հիմնադրամի ծախս:

7. Եթե ամենամսյա դրամական վճարի տրամադրումը դադարեցվում է սույն հավելվածի 4-րդ կետի 4-րդ ենթակետի հիման վրա, ապա վճարված գումարների նկատմամբ կիրառվում են «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զին-ծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ